

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

«Ա. ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏԵՂԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2023-2028

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ

Չարգացման ծրագրի բովանդակությունը

<u>Ներածություն</u>	<u>3</u>
1. <u>Դպրոցի գործունեությունը</u>	<u>4</u>
2. <u>Իրավիճակի վերլուծություն ուժեղ և թույլ կողմերը</u>	<u>7</u>
Դպրոցի պատմությունը -----7	
Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը- -----8	
Դպրոցի շենքի կառուցվածքը (ուսումնական ֆիզիկական միջավայր) -----9	
Կառավարման և խորհրդակցական մարմինները -----10	
Աշակերտական համակազմը-----11	
Մանկավարժական համակազմը-----12	
Ջամագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ-----13	
Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների 14	
Տեխնոլոգիաները և նորարարությունները-----16	
Դպրոցի առաջընթացը-----17	
<u>ուժեղ և թույլ կողմերը-----21</u>	
3. <u>Նպատակների և խնդիրների սահմանում</u>	<u>29</u>
4. <u>Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող միձոցառումների ժամանակացույցը</u>	<u>30</u>
5. <u>Ծրագրի իրականացման ռիսկերը և դրանց կանխարգելման հնարավոր ուղիները</u>	<u>30</u>
6. <u>Ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները</u>	<u>45</u>
7. <u>ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՅԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԿԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ</u>	<u>53</u>

Սույն զարգացման ծրագիրը կազմվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 22 սեպտեմբերի 2022 թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներն ու ձևաչափը հաստատելու մասին» N 35-Ն հրամանի

պահանջներին համապատասխան:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ա. Սարգսյանի անվան Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) զարգացման 2023-2028 թվականների զարգացման ծրագիրը մշակված է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 12-րդ մասի 3-րդ կետի պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով նաև հայեցակարգային հիմնադրույթները, ժամանակակից դպրոցի առջև դրված չափորոշչային պահանջները, կրթական մարտահրավերներն ու տեսլականը:

Դպրոցի զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մեթոդաբանական հիմքերն են.

1 «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը»,

2. «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագիծը,

3. Նախորդ 5 տարիների գործունեությունը ու դրա վերլուծությունը

4. մանկավարժական, ծնողական և աշակերտական համակազմների ձեռքբերումները

5. դպրոցում առկա հիմնախնդիրները:

Դպրոցի զարգացման ծրագիրը ռազմավարական փաստաթուղթ է, որը նախասահմանում է 2023-2028 թվականների դպրոցի զարգացման հիմնական ուղղությունները՝ արդի պետական կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան, հաշվի են առնված կրթական հաստատության ինքնազարգացման ներուժը և Տեղ համայնքի կարիքները, մասնակցայնությունը, ներառականությունն ու իրավիճակային ճկունությունը:

Սույն հեռանկարային ծրագրի հիման վրա պետք է կազմվեն տարեկան աշխատանքային պլանները:

Ա. Սարգսյանի անվան Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցի զարգացման ծրագրի մշակելիս առաջնորդվել են Սմարթ Նպատակներով, այսինքն սահմանել են գործողությունների պլան ու տեսլական՝ հաշվի առնելով հետևյալ ցուցիչները.

- Հստակություն-Որո՞նք են դպրոցի զարգացման նպատակները, ի՞նչ պետք է անենք և ու՞մ հետ
- Չափելիություն-Ինչպե՞ս կարող են վերահսկողական ախտորոշում իրականացնել, թե ինչքանով են հասել իմ նպատակին, արդյոք իմ նպատակները չափելի են
- Իրատեսականություն-Ինչքանով են նպատակները ճշգրիտ ներկայացրել
- Ժամկետայնություն-Ե՞րբ նպատակներին հասած կլինեմ, ինչքա՞ն ժամանակ է պետք

Այս ամենն իրագործելի դարձնելու համար կատարված են հետևյալ հաջորդական քայլերը՝

ա/ սահմանվել է դպրոցի առաքելությունը,

բ/ վերլուծվել է առկա իրավիճակը, ուսումնասիրվել ու բացահայտվել են եղած հիմնախնդիրները,

գ/ սահմանվել են հիմնական նպատակները և դրանցից բխող խնդիրները,

դ/ սահմանվել են հիմնական գերակայությունները, պլանավորվել ու մշակվել կատարման համար անհրաժեշտ գործողությունների, միջոցառումների հաջորդականությունն ու ժամանակացույցը, ռիսկերը, արդյունքների գնահատման չափանիշները

ե/ սահմանվել են հիմնական ռազմավարությունները, գնահատվել եղած և անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները,

գ/սահմանվել է ֆինանսատնտեսական գործունեությունը,

Դպրոցի զարգացման ծրագիրը պլանավորելիս հաշվի է առնվել այն հանգամանքը, որ միջնակարգ դպրոցի հիմնական առաքելությունը սովորողների որակյալ կրթությունը և մասնագիտական կողմնորոշումն ապահովելն է:

1. ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի զարգացման ծրագիրը մշակելիս կարևոր է հստակեցնել դրա առաքելությունը՝ ցանկալի ապագայի մտապատկերը: Դա չափազանց զգայուն և կենդանի գործառույթ է, որի վրա անմիջական ազդեցություն են թողնում արտաքին և ներքին գործոնները:

Հասարակությունը շարունակում է արագորեն փոխվել, և այդ փոփոխությունն իր հետ բերում է բազմաթիվ մարտահրավերներ, հատկապես՝ երեխաների կրթության և դաստիարակության մեթոդների բնագավառում: Կրթությունն էլ է անընդհատ վերափոխվում, բովանդակությունը՝ կատարելագործվում՝ մոտենալով արդի դարաշրջանի սոցիալական, քաղաքական և մանկավարժական պահանջներին: Ճզնածամային երևույթների հաղթահարումը և առաջխաղացումը կրթության բնագավառում տեղի են ունենում հնի վերափոխման, նոր սկզբունքային մոտեցումների դրսևորման, ինչպես նաև մանկավարժությանն ու կրթությանն այլ բովանդակություն հաղորդելու միջոցով: Մեծ տեղ է հատկացվում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանը կրթության բնագավառում:

Կրթական գործընթացի բարելավման նպատակով զարգացման ծրագրում պլանավորել են իրականացնել <<Մարտահրավերների վրա հիմնված>> ուսուցում, այսինքն առաջնորդվել չափորոշիչներին համապատասխան կազմված բովանդակությամբ և հնարավորություն տալ աշակերտներին՝ իրենց կյանքում կիրառվող տեխնոլոգիաների և հմտությունների միջոցով լուծել իրականության մեջ առկա բարդ խնդիրները: Այս կերպ հնարավոր է դառնում աշակերտներից պահանջել աշխատելու ինչպես միմյանց, այնպես էլ իրենց համայնքի, ուսուցիչների, փորձագետների հետ՝ խնդիրներ բացահայտելու և լուծելու, համայնքում դրական փոփոխություններ բերելու: Հետևաբար, նպատակադրվել ենք դպրոցը դարձնել յուրաքանչյուր աշխատողի և սովորողի ստեղծագործական նախասիրությունները, կարողությունները բացահայտող, խթանող, անձի համակողմանի ձևավորմանը նպաստող, որակյալ կրթություն ապահովող կենտրոն՝ առաջնորդվելով ժամանակակից դպրոցի հետևյալ պահանջներով.

1. Ձևավորել սովորողի շարունակական կրթությունն ապահովող անձնային որակներ,
2. Սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ,
3. Կրթության մեջ առաջնահերթություն տալ ուսուցման պրակտիկ ուղղվածությանը, որպեսզի սովորողը կարողանա ձեռք բերված գիտելիքներն ու կարողությունները գործնականում կիրառել:
4. Երաշխավորել սովորողների ազատությունը՝ որպես կրթության արդյունավետության բարձրացման միջոցի: Սովորողին պետք է ընձեռել ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալելու հնարավորություն:
5. Ստեղծել պայմաններ ուսումնահետազոտական գործունեության համար,

6. Ուսումնառության ընթացքում զարգացնել ստեղծագործական աշխատանքներ կատարելու կարողություն,
7. Նպաստել սովորողների հաղորդակցական կարողությունների ձևավորմանը: Այս որակն իր մեջ ներառում է լեզուների, մարդկանց հետ շփման տարբեր եղանակների իմացություն, խմբային աշխատանքի, կոլեկտիվում տարբեր դերեր կատարելու կարողություններ:
8. Հաշվի առնել սովորողների տարիքային առանձնահատկությունները,
9. Կազմակերպել սովորողների ուսուցումը սովորողի նախասիրություններին և կարողություններին համապատասխան
10. Աշխատանքներ տանել՝ կրթական հնարավորությունների անհավասարությունների վերացման համար:

Ի՞նչ կրթական կարիքներ է բավարարելու դպրոցի առաքելությունը

Ամենամեծ և ընդգծված պահանջը մեզ համար լինելու է այն, որ նպաստենք աշակերտների առաջնորդական հմտությունների զարգացումը, որպեսզի նրանց մոտ ձևավորվեն և զարգանան՝

- Էմոցիոնալ բանականությունը
- քննական մտածողությունը
- ստեղծագործական միտքը
- Նորարարությունն ու ձեռներեցությունը
- քաղաքացիական պատասխանատվությունը
- գլոբալ իրազեկվածությունը

Ուսուցման և ուսումնառության արդյունավետ կազմակերպման միջոցով ձևավորվեն

- համակողմանիորեն զարգացած,
- մասնագիտորեն կողմնորոշված,
- ազգային արժեքներ կրող,
- հայրենասեր,
- գլոբալիզացիայի մարտահրավերներին պատրաստ,
- համաշխարհային աշխատաշուկայում կողմնորոշվող և մրցունակ,
- մարդասիրության ոգով դաստիարակված կոմպետենտ քաղաքացիներ:

Ի՞նչ ռեսուրսներ են առկա առաքելության իրագործման համար

1. Նորագույն տեխնոլոգիաների կիրառում որակյալ կրթություն ստանալու համար,
2. Սովորողի կրթական կարիքի գնահատում,
3. Սովորողի կրթական կարիքի բավարարում տարբերակված ուսուցմամբ,
4. Համայնքի հետ ակտիվ համագործակցություն
5. Կրթություն բոլորի համար, որտեղ կարող են սովորել և՛ սովորական, և՛ օժտված , և՛ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները,

6. Սովորողների տեղեկացվածությունը հայաստանյան և համաշխարհային աշխատաշուկային,
7. Մասնակցային և համագործակցային աշխատանքային մթնոլորտ՝ դպրոց-ծնողական համայնք սերտ համագործակցությամբ,
8. Մասնագիտական կողմնորոշման հնարավորություն՝ գործընկեր կազմակերպությունների հետ,
9. Աշակերտների մտավոր զարգացման պայմաններ,
10. Սովորողների արժեհամակարգի ձևավորում՝ հենվելով ավանդույթներով հարուստ բազմամյա պատմություն, առաջացնելով հետաքրքրություն նորի և հարգանք անցյալի նվաճումների նկատմամբ:

Առաքելությունն իրատեսական դարձնելու գրավականներն են՝

- Փորձառու մանկավարժական համակազմը,
- Մեթոդիավորումների համակցված աշխատանքը
- Խորհրդակցական մարմինների արդյունավետ և նպատակամետ աշխատանքը
- Ժամանակակից կրթական պահանջների գիտակցումն ու բավարարումը
- Կայուն ու զարգացած արժեհամակարգի ձևավորումը
- Դրական հոգեբանական միջավայրը
- Մասնակցային և համագործակցային աշխատանքը,
- Համընդհանուր ներառական կրթության իրականացումը,
- Կրթության որակի բարելավմանը միտված շարունակական, միջոցառումները՝ սեմինարներ, վեբինարներ, վերապատրաստումներ,
- Կրթության կազմակերպման միջավայրի շարունակական բարելավումը,
- Համայնքային պատասխանատվությամբ գործունեությունը
- Դպրոցի ակտիվ ներգրավվածությունը սոցիալ-մշակութային միջոցառումներում,
- Արտադասարանական միջոցառումներում սովորողների ներգրավվածությունը (ճանաչողական այցեր, մասնագիտական կողմնորոշման նպատակով

հանդիպումներ, բանավեճեր, քննարկումներ և այլն),

- Դպրոցում ձևավորված ավանդույթները,
- Խրախուսման միջոցները
- Սովորողների մասնակցությունը միջազգային և հանրապետական մրցույթներին

2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ՏԵՂԵՐԸ

Դպրոցի մասին ընդհանուր տեղեկությունները

Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս կառավարության (այսուհետ՝ Հիմնադիր):

1. Դպրոցը հանդիսանում է ՀՀ Սյունիքի մարզի <<Արամայիս Սարգսյանի անվան Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ (պետոճեգիստրի վկայականի գրանցման համարը 60.210.00538, վկայականի համարը 08122017-09-0025, ծածկագիր 10000202.):
2. Դպրոցի ՀՎՀՀ 09205469, լիցենզիա – տարրական ընդհանուր՝ 1-ին աստիճան (սերիա Ա0182, տեղերի թիվը՝ 90), հիմնական ընդհանուր՝ 2-րդ աստիճան (սերիա Ա0176, տեղերի թիվը՝ 140), միջնակարգ ընդհանուր 3-րդ աստիճան (սերիա Ա0148, տեղերի թիվը՝ 90)
3. Ուսումնական հաստատությունը գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ՝ հաստատված 15.11.2017 թ., գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից:
4. Դպրոցի գտնվելու վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզ Տեղ համայնք Տեղ բնակավայր, հեռ.028496744:
5. Դպրոցն ունի ՀՀ զինանշանի պատկերով հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր: Կնիքը, ձևաթղթերը և անհատական այլ միջոցներ ձևավորելիս հայերենին կարող է զուգակցվել անգլերենը և ռուսերենը:
6. Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

« Արամայիս Սարգսյանի անվան Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոց » պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Դպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:

Դպրոցի պատմությունը

Դպրոցը հիմնվել է 1873 թվականին: Դպրոցն ի սկզբանե ունեցել է 21 աշակերտ և եղել եկեղեցական ծխական դպրոց : Դպրոցի հիմնադիր և առաջին ուսուցիչը Գրիգոր Միրզախանյանն է եղել, որը իր կրթությունը ստացել է Շուշիի թեմական դպրոցում: Դպրոցը 1875 թվականին կոչվել է «Տեղ գյուղի մասնավոր կրթարան»՝ արական սեռի: Հայկական դպրոցների հետ այդպիսի բաներ շատ են պատահել: Նրանք մեկ համարվել են ծխական, մեկ՝ մասնավոր և ընդհակառակը: 1880-ական թվականին դպրոցը որոշ ժամանակով փակված է եղել: Պատմաբան Լեոն 1888 թվականին եղել է Սյունիքում և <<Մշակ>> թերթում գրել. «Տեղ անունով հայաբնակ գյուղը, որն ունի 600 տուն, ժողովուրդը գաղափար չունի, թե ինչ է դպրոց»: Գուցե Լեոնի այդ ահազանգից հետո է դպրոցը նորից բացվել: Այնուամենայնիվ հայտնի է, որ 1891 թվականին Տեղ գյուղում գործել է հայկական մեկդասյա արական դպրոց: Գյուղի բնակիչների պահանջով, պետական միջոցների հաշվին, 1893 թվականին «Ղաշար» թաղամասում կառուցվում է դպրոցական մի փոքր շենք, որտեղ սովորում են նաև Կոռնիձոր և Արավուս գյուղերից եկած մի քանի երեխաներ: Աշակերտների ընդհանուր թիվը տատանվել է 50-100-ի սահմաններում, որոնց հետ պարապել են հիմնականում Շուշիի ուսումնարանն ավարտած ոչ տեղացի 2-3 ուսուցիչներ: Որպես ուսուցիչ Տեղ գյուղում աշխատել է նաև հեղափոխական Հակոբ Կամարին: Հայտնի է, որ 1896 թվականից հետո դպրոցը այլևս գործել չէր կարող, որովհետև այդ ժամանակ ցարական կառավարության կարգադրությամբ հայկական բոլոր ծխական դպրոցները փակվել են և փակ մնացել 10 տարի, մինչև 1905 թվականի աշուն: 1905 թվականից հետո ծխական դպրոցի փոխարեն բացվել և գործել է պետական (ռուսական) դպրոց: Ուսումը դարձել է պարտադիր և գյուղի բոլոր դպրոցահասակ երեխաներն ընդգրկվել են դպրոց: 1910 թվականին, երբ գյուղն ուներ 700 տուն՝ 3532 բնակիչով, դպրոցում սովորում էր 100, 1921 թվականին՝ 150, 1930 թվականին՝ 338, 1941 թվականին՝ 500, 1963 թվականին՝ 702 աշակերտ: Իր գոյության ընթացքում դպրոցը տվել է հազարավոր շրջանավարտներ: Նրանցից շատերը ուսումը շարունակել են բարձրագույն ուսումնական

հաստատություններում, դարձել գիտության, մշակույթի և ժողովրդական տնտեսության այլ բնագավառների մարդիկ: Դպրոցը 1966 թվականին անվանակոչվել է Խորհրդային միության հերոս, Տեղ գյուղացի Արամայիս Սարգսյանի անունով: 2011 թվականի հունիսի 9-ին դպրոցի կենտրոնական մասնաշենքը փլվել էր: Դպրոցի վերանորոգման աշխատանքները ավարտվել են 2013 թվականին:

Դպրոցում աշխատում է 22 ուսուցիչ՝ 21 բարձրագույն մասնագիտական կրթությամբ:

Դպրոցի աշակերտների թիվը 197 է:

Մանկավարժական խորհուրդը կազմված է 28 անդամից:

Կառավարման խորհուրդը կազմված է 14 անդամից՝

Ճնողական խորհուրդը կազմված է 12 անդամից:

Աշակերտական խորհուրդը կազմված է 6 անդամից:

Խորհրդակցական մարմիններն ունեն կանոնադրություն, աշխատանքային պլաններ, գործում են օրենքով նախատեսված իրենց իրավասությունների սահմաններում:

Դպրոցը գործում է մեկ հերթով և հինգօրյա աշխատանքային ռեժիմով:

Դպրոցը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել ՀՀ –ի և օտարերկրյա ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ: Նախահաշիվը և ֆինանսատնտեսական հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի կայքում

Դպրոցի գործունեությունը կանոնակարգվում է հետևյալ իրավական ակտերով՝

«Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով, «ՀՀ աշխատանքային օրենսգրքով», դպրոցի կանոնադրությամբ, օրինակելի իրավական ակտերի տեղայնացված տարբերակներով, ներքին իրավական ակտերով, նորմատիվ փաստաթղթերով: Դպրոցին վերաբերող բոլոր իրավանորմատիվային փաստաթղթերի վարումը իրականացվում է սահմանված կարգով: Անհրաժեշտության դեպքում մշակվում և գործածության մեջ են դրվում ներքին գործածության համար նախատեսված իրավական նոր ակտեր (օրինակ՝ ներքին կարգապահական կանոններ, աշխատակարգեր և այլն):

Դպրոցավարությունն իրականացվում է սահմանված կարգով:

Դպրոցի գործունեության փաստաթղթերի թղթային ձևաչափից աստիճանաբար անցում է կատարվում էլեկտրոնայինի:

Դպրոցում վարվում են նաև դպրոցի կանոնադրությանը համապատասխան մշակված ձևաթղթեր՝ ներքին դպրոցական վերահսկողություն անցկացնելու նպատակով:

Դպրոցի շենքի կառուցվածքը (ուսումնական ֆիզիկական միջավայր)

Առկա դպրոցի շենքը կառուցվել է 2013 թվականին, բաղկացած է 1 մասնաշենքից, որին կից կառուցված է սպորտդահլիճը, դպրոցը համապատասխանում է անվտանգ շահագործման

նորմատիվներին, գործում է անվտանգության համակարգ, մուտքի մոտ և միջանցքներում տեղադրված են տեսախցիկներ:

Մասնաշենքը եռահարկ է: Մասնաշենքի առաջին հարկը կիսանկուղային է, որը պատերազմական դրության ժամանակ կարող է ծառայել որպես թաքստոց: Առաջիկա տարում ՄԱԿ ի պարենի զարգացման ծրագրով նախատեսվում է այն կահավորել ապաստարանին բնորոշ գույքով, իսկ ապաստարանի ելքի մոտ գտնվող (թշնամու կողմից դիտարկվող հատվածում) կառուցել պաշտպանիչ պատ:

Դպրոցում՝ այս պահին գործում է 12 դասասենյակ՝ ապահովված լավ վիճակում գտնվող գույքով: Կա ԿԱՊԿՈՒ սովորողների մասնագիտական աջակցությունների սենյակ(որը կահավորված է համապատասխան գույքով), 3 վարչական սենյակ համակարգչային լսարան, գրադարան, , նախնական զինպատրաստության սենյակ, հրաձգարան (որտեղ գտնվում է AK74 մենամարտ վարժասարքը), զենքի պահեստ, ճաշարան, բուժսենյակ, 2 կահավորված լաբորատորիա, 7 սանհանգույց:

Դպրոցի ճաշարանի մուտքի մոտ տեղադրված է 2, լաբորատորիաներում՝ մեկական վճարաններ, որոնք ապահովված են մշտական հոսող ջրով: Դպրոցի նկուղային հարկում առկա է օդափոխության համակարգ, որն իրականացնում է ճաշարանի, հրաձգարանի, ինչպես նաև ամբողջ նկուղային հարկի օդափոխությունը:

Դպրոցն ունի 23 համակարգիչ(4 վարչական օգտագործման), 3 նոութբուք, 7 բազմաֆունկցիոնալ տպիչ սարք,3 պլանշետ, 1 էլեկտրոնային գրատախտակ, մեկ սմարթ հեռուստացույց, 1 պրոյեկտոր, լաբորատորիաների համար անհրաժեշտ սարքավորումներ, ուսումնական նյութեր, դիդակտիկ պարագաներ: «Կրթական ծրագրերի կենտրոն» ՃԻԳ պետական հիմնարկի -«Լան Ար Սերվիս» ՍՊԸ-ի միջոցներով դպրոցը համալրվել է հեռավար ուսուցում կազմակերպելու գործիքակազմով: Բոլոր նշված համակարգիչները միացված են դպրոցում գործող WIFI ցանցին:

Դպրոցում գործում են ԱՐՄԱԹ ինժինեռական լաբորատորիա, 3 առարկայական կաբինետներ՝ շախմատի, գրականության, պատմության, ՅԿԽԸ <<Կրթության հասանելիություն սահմանամերձ բնակավայրերի, Արցախից տեղահանված և սոցիալապես անապահով երեխաների համար ծրագիր>>-ի սենյակ, նախատեսվում է դպրոցում տեղակայել աշխարհագրության և մաթեմատիկայի առարկայական կաբինետներ, աշխրհրդի սենյակ:

Կամար	Ծիսությունների և հարմարությունների անվանումը	Քանակը	Մակերեսը	Ճավայր	Այլ տեղեկություններ
1	2	3	4	5	6
1	Ծեղք / եր /	1	1822,7	6355	
2	Առանձնասենյակներ	3	48	144	
3	Դասարաններ	9	321,5	964,4	
4	Առարկայական լսարաններ	4	304,4	913,2	
5	Լաբորատորիաներ	1	48,3	144,9	
6	Արհեստանոցներ				
7	Մարզադահլիճներ	1	147,8	1330,2	
8	Գրադարան /ներ/	1	49,1	147,3	
9	Բուժկետ	1	15,3	45,9	
10	Ճաշարան	1	86,4	259,2	
11	Չանդերձարան /ներ/	4	118,1	354,3	Չանդերձարանին կից առկա է սանհանգույց, լոգարան

12	Չուզարան /ներ/	7	43,6	130,8	
13	Տեխնիկական նշանակության այլ սենյակներ	7	146	438	
14	Մարզահրապարակ /ներ/	2	6931,9		
15	Հանրակացարաններ				
16	Ննջասենյակներ				
17	Համակարգիչներ	23			
18	Համակարգչային այլ տեխնիկա	13			
19	Հեռախոսներ	1			
20	Ձեռուցվող տարածքներ	35	1675,9	5914,6	
21	Ձեռուցման տեսակը	Գազ			
22	Ձեռուցման օրերը	Նոյեմբերի 1-ապրիլի 15-ը			
23	Տրանսպորտային միջոցներ				
24	Երթևեկող աշակերտներ	11			
25	Գիշերող սովորողներ				
26	Մրգատու այգիներ				
27	Դեկորատիվ, բուսական այգիներ				
28	Շենքերի ներսի մաքրվող մակերեսներ		1779,1		
39	Շենքերի դրսի մաքրվող մակերեսներ		1258,5		
30	Սան. Հանգույցների մաքրվող մակերեսներ	7	43,6		

Կառավարման և խորհրդակցական մարմինները

Դպրոցը սերտորեն համագործակցում է և՛ կառավարման, և՛ խորհրդակցական մարմինների հետ. դպրոցի գործունեությունը բաց է և թափանցիկ:

Կառավարման խորհուրդը գործում է և մշտապես գործել է դպրոցի կանոնադրության և լիազոր մարմնի կողմից սահմանված կարգերով իրեն վերապահված գործառնություններին համապատասխան: Նրանց գործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը, խորհուրդը շահագրգիռ է դպրոցի առաջընթացի հարցում, պատրաստակամորեն աջակցում է բոլոր նախաձեռնություններին:

Մանկավարժական խորհուրդը պատշաճորեն կատարում է կանոնադրությամբ իրեն վերապահված գործառնությունները, հիմնականում գումարվում է բոլոր անդամների մասնակցությամբ, քննարկում է նաև զարգացման ծրագրի իրագործման հետ կապված խնդիրները, անդրադառնում է ընթացիկ հարցերին և կոլեկտիվ պատասխանատվություն կրում ընդունված որոշումների համար:

Աշակերտական խորհուրդը ակտիվ է և գործում է ժողովրդավարական սկզբունքներով: Դպրոցի տնօրենությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը՝ առավել ակտիվացնելու սովորողների ինքնավարությունն ու ինքնակառավարումը:

Աշակերտական խորհուրդը հանդես է գալիս մի շարք առաջարկություններով, ներքին կարգապահական կանոնների կենսագործմանը, սովորողների արտաքին տեսքին և կեցվածքին,

պայքարում ուշացումների դեմ, կազմակերպում է միջոցառումներ, հանդիպումներ, ճանաչողական այցեր:

Կարևորելով աշակերտական ինքնակառավարումը՝ պարբերաբար անցկացվում են հանդիպումներ սովորողների հետ, լսում նրանց, լուծում տալիս խնդիրներին: Անչափ կարևորում ենք աշակերտների կողմից բարձրացված հարցերի խոր և մասնագիտական վերլուծությունը, աշակերտական խորհրդի նախաձեռնողա- կանության խթանումը:

Աշակերտական խորհրդի նախագահը, ըստ անհրաժեշտության, խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարում են նիստերը հստակ օրակարգերով, վարում աշակերտական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը:

Ծնողական խորհուրդը մշտապես իրագել է և ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում: Ծնողական խորհրդի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով, ըստ անհրաժեշտության, մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարում են նիստերը հստակ օրակարգերով, վարում ծնողական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը:

Ծնողական խորհուրդը դասարանական ծնողխորհուրդների միջոցով կազմակերպել է բազում ճանաչողական էքսկուրսիաներ, այցելություններ թանգարաններ և այլ միջոցառումներ:


Աշակերտական համակազմը

2022-2023 ուստարում դպրոցում սովորում է 197 աշակերտ: Ամուր է դպրոց-ըրջանավարտ կապը, ինչը փաստում է, որ մեր սաները սիրում են դպրոցը, սիրով են հաճախում, իրենց զգում են հարգված, ապահով, գնահատում են դպրոցի տնօրենության և մանկավարժական համակազմի աշխատանքը:

Դպրոցը հատուկ ուշադրություն է դարձնում աշակերտների հաջողություններին դպրոցում և դպրոցից դուրս: Կարևորում է նրանց ձևավորումը՝ որպես անհատականություններ, որպես քաղաքացիներ, ցուցաբերում է անհատական մոտեցում բոլոր դաշտերում: Դպրոցը պարբերաբար տարբեր ձևաչափերով խրախուսում է շնորհալի, դպրոցասեր և ակտիվ աշակերտներին, նրանց նախասիրությունները:

Դպրոցի աշակերտները հաջողությամբ մասնակցում են առարկայական օլիմպիադաների, տարբեր առարկայական մրցույթների («Մեղու» «Կենգուրու, կորիզ), ստեղծագործական և սպորտային մրցույթների: Այդ ամենը լուսաբանվում է դպրոցի կայքէջերում:

ԴՊՐՈՑԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ ԸՍՏ ՈՒՍՏԱՐԻՆԵՐԻ



Մանկավարժական համակազմը

Մանկավարժական համակազմը համալրված է փորձառու և որակյալ կադրերով: Ուսուցիչները համավարակի պայմաններում բարելավեցին իրենց կարողությունները տեղեկատվական տեխնոլոգիաների դաշտում և կարողացան պատշաճորեն իրականացնել հեռավար ուսուցում: Այսօր էլ, ըստ անհրաժեշտության, իրականացնում են հիբրիդային ուսուցում, մեծամասնությունը հմտորեն կիրառում է MS Teams հեռավար հարթակն իր բոլոր հնարավորություններով, հմտորեն օգտվում է առկա էլեկտրոնային կրթական ռեսուրսներից, նաև իրենք են ստեղծում ռեսուրսներ:


Դպրոցի ուսուցչական համակազմը համալրվում է ուսուցչի թափուր տեղի համար հայտարարվող մրցույթով՝ ըստ լիազոր մարմնի կողմից սահմանված կարգի:

Կադրային քաղաքականությունը կրել և կրելու է շարունակական բնույթ, մանկավարժական համակազմը համալրվելու է նոր բարձրորակ կադրերով:


Բոլոր ուսուցիչները հիմնականում ապահովված են մեկ դրույքաչափով:

Դպրոցում գործում են տարրական, հումանիտար և բնագիտական առարկաների մեթոդիկավորումները՝ ըստ իրենց գործառնությունների:

ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹԻՎԸ ԵՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՈՒՍՏԱՐԻՆԵՐԻ



ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ



Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

Դպրոցը համագործակցում է համայնքի հետ, աջակցում համայնքի կազմակերպած միջոցառումների անցկացմանը. համատեղ շաբաթօրյակ, ծառատունկ, հանդիպումներ համայնքի ղեկավարի հետ: Համայնքի ներկայացուցիչները հրավիրվում են մասնակցելու դպրոցում կազմակերպվող միջոցառումներին, մասնավորապես, ազգային տոներ և տոնակատարություններ, հիշատակի օրեր անցկացնելիս: Դպրոցի աշակերտներն մասնակցում են տարբեր ծրագրերի՝ միտված համայնքի կարիքների հետազոտմանը:

Դպրոցը համագործակցում է ինչպես ԳՊՀ- ի այնպես էլ ՀՀ բուհերի և այլ կառույցների հետ:

Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների

Կրթության որակը սովորողի կրթական գործունեության և պատրաստվածության համալիր քննությամբ է, որն արտահայտում է դրանց համապատասխանությունը պետական և առարկայական չափորոշիչներին և անհատի կրթական կարիքներին:

Դպրոցը լուրջ աշխատանք է տանում ուսման որակը և աշակերտների կարողունակությունները, գիտելիքների անհրաժեշտ ծավալը ապահովելու, արժեհամակարգը ձևավորելու համար:

Կրթության որակի ապահովման համար տարվում են հետևյալ աշխատանքները.

- Կազմված են թեմատիկ պլաններ՝ պետական չափորոշիչներին ու ծրագրերին համապատասխան,
- Մեթոդիավորումները վերահսկում են այդ պլանների կատարումը,

դասավանդման որակը, տնային հանձնարարությունների ծավալը, թեմատիկ գրավորների տրման ժամկետներն ու բովանդակությունը,

- Պարբերաբար կատարվում են մշտադիտարկումներ, առարկաների դասավանդման դրվածքի ուսումնասիրություններ,
- Տրվում են հայտորոշիչ գրավոր աշխատանքներ՝ ստուգելու մնացորդային գիտելիքը,
- Յուրաքանչյուր դասարանի աշակերտների՝ բոլոր առարկաների արդյունքների վերաբերյալ կազմվում են տեղեկագրեր:
- Աշակերտների առաջադիմության մասին զեկուցվում է դասղեկների և մեթոդիավորումների նիստերում, քննարկվում են առաջադիմությունը, որակը, հոգեբանական և ուսուցման բովանդակության լուրջ փոփոխություններին աշակերտների հարմարեցման անհրաժեշտությունն ու ձևերը:
- Ըստ անհրաժեշտության՝ անցկացվում են դասարանական խորհրդակցություններ, քննարկվում ծագած խնդիրները, գտնում լուծման ուղիներ:
- Ապահովվում է ուսուցիչների շարունակական մասնագիտական աճը:
- Դասապրոցեսում ներդրվում են նորագույն տեխնոլոգիաներ, էլեկտրոնային կրթական ռեսուրսներ, արդյունավետ մեթոդներ:

	2018-2019 ուստարի	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի
Գերազանցիկ	26	17	26	25	23
Մեղալակիր	-	-	-	-	-
Կարմիր վկայական	-	3	-	-	2 (հավակնորդ)
Հիմնական դպրոցնավարտած	20	16	20	21	20
Միասնական քննություն հանձնող	4	7	6	6	8
ԲՈՒՀ ընդունվող	4	6	8	7	
Միջնակարգ դպրոցն ավարտած	15	18	18	20	16
Մրցանակներ ստացած	3	2	3	6	4
Հանրապետական օլիմպիադայի մասնակից	-	1	2	2	1

Դասարան	Աշակերտների թիվ	7-10 միավորային գն. ստացող սովորողներ	Որակական ցուցանիշ %
I	14		
II	15	13	86,7
III	10	11	55
IV	15	5	33.3
V	13	5	38.5
VI	18	4	22.2
VII	15	4	26.7
VIII	15	5	33.3
IX	20	3	15
X	19	2	10.5
XI	16	4	25
XII	16	5	31.3
Ընդ.	197	61	31

Տեխնոլոգիաները և Նորարարությունները

Դպրոցի կողմից շատ է կարևորվում ՏՐՏ տեխնոլոգիաների ներդրումը դասապրոցեսում: Դպրոցը պարբերաբար անցկացրել է սեմինարներ, վեբինարներ՝ միտված նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը դասապրոցեսում: 2020 թվականի մարտին դպրոցի ուսուցչական կազմն առանց բարդությունների, սահուն անցավ հեռավար ուսուցման: Իսկ այսօր արդեն իրականացվում է հիբրիդային ուսուցում՝ ըստ հեռավարի կարգի, դասերը վարվում են MS Teams միասնական կրթական հարթակի միջոցով՝ օգտագործելով տարբեր էլեկտրոնային կրթական ռեսուրսներ, ուսուցիչների մեծ մասը դասերը վարում է և՛ համաժամանակյա, և՛ պլանավորելով առցանց առաջադրանքներ:

Ուսուցման ընթացքում ուսուցիչները կիրառում են թիմային, խմբային աշխատանքներ, ուսուցման նախագծային մեթոդներ, շրջված դասարան մոդելը, պրոբլեմային ուսուցման տարրեր:

Տեղեկատվությունն արագ և օպերատիվ հասանելի դարձնելու, աշխատանքները համակարգելու համար վարվում են առցանց հարթակներ:

Դպրոցի առաջընթացը	
Դպրոցի հաջողության գրավականը բոլոր օղակների միջև գործող համագործակցային, փոխօգնության, կառուցողական հարաբերություններն են, ուսումնական առողջ միջավայրի առկայությունը, ժողովրդավարական սկզբունքները:	
Ջեռավար կրթության ապահովում՝ ըստ անհրաժեշտության, միասնական կրթական հարթակի՝ MS Teams-ի կիրառությամբ	
Դպրոցի գործունեության թափանցիկության ապահովման և լուսաբանման նպատակով գործում է դպրոցի պաշտոնական կայքը https://tegh1.schoolsite.am/ ֆեյսբուքյան էջը՝ https://www.facebook.com/profile.php?id=100066151853437	
Մանկավարժական համակազմի ձեռքբերումներ	Բոլոր ուսուցիչներն ունեն բարձրագույն կրթություն և համապատասխան որակավորում:
	Բոլոր ուսուցիչներն անցել են համապատասխան վերապատրաստումներ, այդ թվում նաև՝ՀՊԶ-ի նոր դասընթացը, ատեստավորված են, համապատասխանում են դպրոցում դասավանդելու չափանիշներին, երկու ուսուցիչ առաջիկայում կմասնակցեն կամավոր ատեստավորմանը, մեկ ուսուցիչ մասնակցել է համապատասխան մրցույթներին և ստացել է <<Դասավանդիր Հայաստան>> մենթորի կարգավիճակ:

<p>Աջակցություն մանկավարժներին</p>	<ul style="list-style-type: none"> ● SRS կարողությունների և թվային հմտությունների զարգացում ● Կրթական առցանց գործիքների իմացություն և կիրառում ● Մշտական տեղեկացվածության ապահովում կրթական նորությունների, առաջընթացի մասին ● Առաջավոր փորձի փոխանակման հնարավորությունների ապահովում ● Էլեկտրոնային կրթական ռեսուրսների օգտագործում՝ e-school.am, armedu.am, lib.armedu.am, kznakhimnadram.blogspot.com, dasaran.am, imdproc.am, ● Զեռավար դասավանդման հմտությունների զարգացում
<p>Ժողովրդավարական սկզբունքների կարևորում</p>	<ul style="list-style-type: none"> ● Ձևավորված են և ակտիվորեն գործում են աշակերտական խորհուրդն ու ծնողական խորհուրդը, որոնք սերտորեն համագործակցում են տնօրենության և մանկավարժական համակազմի հետ: ● ԱԽ-ն հանդես է գալիս նախաձեռնություններով, անցկացնում ինքնուրույն միջոցառումներ, <p>խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին, անկաշկանդ ներկայացնում և քննարկում է իր պլանները տնօրենի հետ:</p> <ul style="list-style-type: none"> ● ԱԽ-ի իրավական և սոցիալական հանձնախմբերը կազմակերպում են քննարկումներ, միջոցառումներ՝ ուղղված աշակերտների իրավունքների և պարտականությունների ճանաչմանը:
<p>Դպրոցի համագործակցային դաշտ</p>	<p>Դպրոցը համագործակցել և համագործակցում է՝</p> <p>Ծնողական և աշակերտական խորհուրդների հետ՝ ապահովելով.</p> <ul style="list-style-type: none"> ❖ Ընդհանուր տեսլականի համաստեղծում ❖ Գործողությունների պլանի կազմում ❖ Զավաքական գործողությունների ձեռնարկում ❖ Զավաքական ներագդեցության գնահատում <p>Իսկ ահա այլ դաշտում՝</p> <ul style="list-style-type: none"> ○ Տեղի համայնքապետարան ○ ԳՈՒՄ ՀԿ ○ ՍՈՍ Հայ- ֆրանսիական կազմակերպություն ○ ԳՊՀ ○ Դասավանդիր, Հայաստան

	<ul style="list-style-type: none"> ○ Հայկական Կարմիր խաչի ընկերություն ○ ՅՈՒՆԻՍԵՖ ○ <<Այբ>> դպրոց
	Մասնակցություն մարզային, հանրապետական օլիմպիադաներին հանրապետական մրցույթների ու մրցաշարերին՝ «Կենգուրու» , Կորիզ և «Մեղու»
Դպրոցի ակտիվություն	հանրապետական մրցույթներ, ստեղծագործական մրցույթներ
	Մշակութային և սոցիալական բնույթի արտադասարանական, արտադպրոցական միջոցառումներ, գրույց-քննարկումներ, բանավեճեր
	Հիշատակի և խոնարհման երթեր,
Դպրոցում ձևավորված ավանդույթներ	<ul style="list-style-type: none"> ● Ամենամյա տարեվերջյան եռակողմ նիստ՝ դպրոց-ծնող-աշակերտ, որի ժամանակ տնօրենը տալիս է տվյալ ուստարվա հաշվետվությունը սահիկահանդեսի, ֆիլմաշարի միջոցով:

ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

Աղյուսակ 1

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.Դպրոցի շենքային պայմաններ	
<ul style="list-style-type: none"> • Հիմնանորոգված շենք, նոր գույքով կահավորված, լուսավոր և հիգիենիկ պահանջներին բավարարող դասասենյակներ: • Ընդարձակ մարզադահլիճ, և մարզահրապարակ: • Համապատասխան գույքով և սարքավորումներով կահավորված կաբինետներ, լաբորատորիաներ: • ԿԱՊԿՈՒ երեխաների համար նախատեսվախ մասնագիտացվախ աջակցությունների սենյակ՝ կահավորված համապատասխան գույքով: • Դպրոցում չափանիշներին համապատասխան ճաշարանի առկայություն, որը հնարավորություն է տալիս <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագրի շրջանակներում 1-4 րդ դասարանների աշակերտներին ապահովել տաք սննդով: • Հատուկ կարիքներով երեխաների համար նախատեսված թեքահարթակ և հարմարեցված սանհանգույց: • Համակարգչային վերագինված կաբինետ, այդ թվում և Արմաթ լաբորատորիա: • Հագեցած գրադարան և ընթերցասրահ: • Նոր սարքավորումներով կահավորված ՆՁՊ կաբինետ: • Անվտանգության համակարգ, տեսախցիկներ: 	<ul style="list-style-type: none"> • Դասասենյակների թիվը փոքր է, չափսերը չեն համապատասխանում նորմատիվային պահանջներին: • Հանդիսությունների դահլիճի բացակայությունը: • Միջանցքների ոչ լուսավոր և նեղ լինելը • Լաբորատորիաներում քարշիչ պահարանների բացակայություն: • Դպրոցը չունի արհեստանոց, միջանցքներում՝ հանգստյան գոտիներ:

<p>2. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր</p> <p>/դպրոցի կանոնադրություն, տեղայնացված օրինակելի իրավական ակտեր, ներքին իրավական ակտեր, դրանց վարումը/</p>	
<ul style="list-style-type: none"> Պարտադիր գործածության բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ և էլեկտրոնային, լրացվում են <p>սահմանված կարգերի համաձայն:</p> <ul style="list-style-type: none"> ԿԳՄՄՆ-ի կողմից հաստատված պարտադիր գործածության օրինակելի փաստաթղթերը համապատասխանեցված են դպրոցի կառուցվածքային <p>առանձնահատկություններին և վարվում են կանոնադրության պահանջներին համապատասխան:</p> <ul style="list-style-type: none"> Դպրոցում վարվում են նաև դպրոցի կանոնադրությանը համապատասխան մշակված ձևաթղթեր՝ ներքին դպրոցական վերահսկողությունն անցկացնելու, վերլուծություն կատարելու նպատակով: 	<ul style="list-style-type: none"> Օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս ուսուցիչների պասիվ մասնակցություն: ՆԴՎ իրականացման էլեկտրոնային գործիքակազմի համալրում՝ որպես ներքին իրավական ակտերի:

<p>3. Աշխատակազմի գործունեության ուժեղ կողմեր՝ տարանջատել վարչական, ուսումնասօժանդակ և ուսուցչական կազմը</p>	
